

Կ-021¹-16.06.2017-SՀ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

17. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ							
1.	Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում (բացառությամբ՝ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)	ԿՄ					
2.	Քաղաքաշինական փաստաթղթերի կործանումներ (բացառությամբ՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)	ԿՄ					
3.	Շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների, համապատասխան նպատակի համար նախատեսված հողամասի տարածքում ոչ ձեռնարկատիրական նպատակով սեփականատիրոջ կողմից կառուցվող՝ 300 քառ. մ ընդհանուր մակերեսը չզերազանցող՝ մինչև երկու վերգետնյա ու մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տների, հաստատված բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով կառուցվող օբյեկտների, 150 քառ. մ ընդհանուր մակերեսը չզերազանցող օժանդակ շինությունների, 50 քառ. մ ընդհանուր մակերեսը չզերազանցող ավտոտնակների, 1000 քառ. մ ընդհանուր մակերեսը չզերազանցող ջերմոցների, 500 քառ. մ ընդհանուր մակերեսը չզերազանցող գյուղատնտեսական արտադրական նշանակության ոչ հիմնական շինությունների և 100 քառ. մ ընդհանուր մակերեսը չզերազանցող հասարակական նշանակության ոչ հիմնական շինությունների)	ԿՄ					
4.	Շինարարության որակի տեխնիկական հսկողություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների, համապատասխան նպատակի համար նախատեսված հողամասի տարածքում ոչ ձեռնարկատիրական նպատակով սեփականատիրոջ կողմից կառուցվող՝ 300 քառ. մ ընդհանուր մակերեսը չզերազանցող՝ մինչև երկու վերգետնյա ու մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տների, հաստատված բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով կառուցվող օբյեկտների, 150 քառ. մ ընդհանուր մակերեսը չզերազանցող օժանդակ շինությունների, 50 քառ. մ ընդհանուր մակերեսը չզերազանցող ավտոտնակների, 1000 քառ. մ ընդհանուր մակերեսը չզերազանցող ջերմոցների, 500 քառ. մ ընդհանուր մակերեսը չզերազանցող գյուղատնտեսական արտադրական նշանակության ոչ հիմնական շինությունների և 100 քառ. մ ընդհանուր մակերեսը չզերազանցող հասարակական նշանակության ոչ հիմնական շինությունների)	ԿՄ				ո	<
5.	Ինժեներական հետազննում	ԿՄ				ո	
6.	Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն	ԿՄ		-	-	-	ո <

Հոդված 2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը [Լիցենզավորման մասին] ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան տրված լիցենզիաները շարունակում են մնալ ուժի մեջ մինչև «Ճարտարապետական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով «Հայաստանի Հանրապետության Ճարտարապետների պալատ» ինքնակարգավորվող ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցման գրանցման օրվան հաջորդող վեցերորդ ամիսը լրանալը: Նախկինում տրված լիցենզիաների գործողությունը դադարում է սույն հոդվածով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող օրվանից:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո: